

Հանդիսավոր նիստ և տոնական ցերեկույթ Մայիսյան հաղթանակների առթիվ

08.05.2015

Մայիսի 8-ին Գավառ քաղաքի մշակույթի տանը տեղի ունեցավ հանդիսավոր նիստ, նվիրված հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի 70 ամյակի և Շուշիի ազատագրման տարեդարձի առթիվ: Մինչ նիստի մեկնարկը մասնակիցները մեկ րոպե լռությամբ իրենց հարգանքի տուրքը մատուցեցին Մեծ հայրենականի, Շուշիի ազատագրման և Հայոց Մեծ եղեռնի անմեղ զոհերի հիշատակի առաջ: Այնուհետև զեկուցմամբ հանդես եկավ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանը: Փոխմարզպետը նախ շնորհավորեց Գեղարքունիքի մարզում ապրող Մեծ հայրենականի 89 վետերաններին և ողջ հայ ժողովրդին մայիսյան հաղթանակների առթիվ, Հայոց երկրին մաղթելով հզորացում ու բարեկեցություն, հայրենի սահմաններին ամրություն ու խաղաղություն: Անդրադառնալով ֆաշիստական Գերմանիայի դեմ տարած հաղթանակին վերաբերող մանրամասների, Անդրանիկ Հակոբյանն իր խոսքում նշեց, որ չլինել Խորհրդային Միությունը, չլինել հայ ժողովրդի հերոսական մաքառումը Մեծ հայրենականի ռազմադաշտում, հայ ժողովուրդը կկանգներ ցեղասպանության և հայրենազրկման վտանգի առաջ: „ Պատկառելի է այդ հաղթանակի մեջ հայ ժողովրդի ներդրումը՝ հերոսներ, գեներալներ, զորահրամանատարներ, մարշալներ: Այդ աշխարհավեր պատերազմում արյուն թափած հայ այրերի զավակներս, երբեք չենք կարող մոռանալ, առավել ևս՝ ուրանալ մեր հայրերի ու պապերի կրած տառապանքները, ցուցաբերած սխրանքները, կենաց- մահու կռիվներում ձեռք բերած հաղթանակները: Ավելին, մենք սերնդեսերունդ կշարունակենք խոնարհվել Մեծ հայրենականում փառքի ու անմահության ճամփաներով անցած բոլոր հայորդիների հիշատակի առաջ, փառաբանել նրանց մեծագործությունները, որոնք հային ավյուն ու ոգի հաղորդեցին Արցախյան գոյամարտում,,- նշեց Անդրանիկ Հակոբյանը: Այնուհետև Գավառի քաղաքապետի տեղակալ Գրիգոր Բոշյանն ընթերցեց Գավառի քաղաքապետ Գուրգեն Մարտիրոսյանի շնորհավորական ուղերձը ուղղված Մեծ հայրենականի և Արցախյան ազատամարտի վետերաններին: „ Մայիսյան հաղթանակները ճակատագրական նշանակություն են ունեցել հայ ժողովրդի համար: Թույլ տվեք ջերմորեն շնորհավորել բոլորիս այդ հաղթանակների առթիվ, ցանկանալ խաղաղ երկինք, ազատ ու ստեղծագործ հայրենիք,,- նշված էր ուղերձում: Հանդիսավոր արարողությունից հետո ներկաները մասնակից եղան Գեղարքունիքի մարզպետարանի և Գավառի քաղաքապետարանի համատեղ ուժերով կազմակերպած գրական-երաժշտական ցերեկույթին: Ծրագիրը ներառում էր հայրենաշունչ և հաղթական երգեր ու բանաստեղծություններ, որոնք ընդմիջվում էին հուզիչ ելույթներով, Մեծ հայրենականում տարած հաղթանակի և Շուշիի ազատագրմանը վերաբերող փաստագրական տեղեկություններով: Հայկական

ազգագրական և հաղթական պարերի շարաններով հանդես եկան Գավառ քաղաքի արվեստի դպրոցի և Մարտունի քաղաքի պարի խմբերը, անհատական կատարումներով հանդիսատեսին տոնական տրամադրություն հաղորդեցին Գավառ քաղաքի երաժշտական դպրոցի կատարողները: Յերեկոյթի ընթացքում հնչեցին փառաբանման ու մեծարանքի խոսքեր՝ ուղղված Շուշիի ազատագրմանը հերոսացած հայորդիներին, որդեկորույս մայրերին, մեր կողքին ապրող վետերաններին: Տոնական միջոցառումը եզրափակեցին Գավառ քաղաքի արվեստի դպրոցի պարի խմբի տղաները՝ հայկական ,, Բերդ,,պարի խրոխտ կատարումով: